

Չի աւասիկ, ահաւասիկ կը տեսնեմ
 Արգանդներուն մէջ ձեր լայն՝
 Նոր Սաղմեր նոր Որդիներու ըստեղծիչ:
 Իրենց մըռայլ ձեւին ներքեւ կը պահեն
 Յըզօր ճեմքերն Առիւծներու ապագայ.
 Ձեր աչքերէն իրենց աչքերը փոքրիկ
 Կը բացուին պիշ աստղերու յորդ շողերուն.
 Եւ մերթ թագչած խորհուրդին մէջ աղիքի
 Կը թափառին, մեծնալով,
 Աւերին մէջ իրենց վաղուան ժառանգին.
 Իրենց շըրթունքն, ո՛վ Մայրեր, ձեր շըրթունքէն,
 Կայծակներու ծարաւով,
 Դեպ ամպերու երակներուն կ'երկըննան,
 Կ'երկըննան դէպ ի հայկական արիւնին
 Գերաստուածեան հաղորդութեան՝ որուն մէջ
 Յայրենիքի Սերը վեհ
 Կրօնքը կ'ըլլայ հազարաւոր կրօնքներու:
 Ու վա՛ղը, վա՛ղն, ո՛վ հեզ Մայրեր, լըսեցէ՛ք,
 Ձեր արգանդէն մի առ մի
 Պիտի ելլեն անոնք հըսկայ եւ հերոս:
 Մեծ պիտ' ըլլան. մըրրիկն իրենց մագերուն
 Պիտի սարսէ վերն աստղերուն մէջ Աստուած.
 Պիտի հագնին արծուի մաշկեղ թըռիչներ՝
 Շանթերն իրենց վըրայ կրելու միշտ պատրաստ.
 Գլուխնուն վրայ Ազատութեան արաղչինն
 Ուլունքի տեղ պիտի հիւսուի աստղերով:
 Օ՛ն, լըսեցէ՛ք, լըսեցէ՛ք, այս, ո՛վ Մայրեր,
 Վաղն երբ անոնք թամբեն իրենց նըժոյգներն
 Ու անոնցմով, գերդ պողպատի շըրդեղում,
 Վըրեժին մէջ մըկըրտուին.
 Երբ թուրք արեան բարկ ծարաւէն մոլեգնած՝